

Եղգար Էլբակյան
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, 3-րդ կուրս
Գիտ. ղեկ.՝ ԳՅ ԳԱԱ թղթ.-անդամ, պ. գ. դ., պրոֆ., Ա. Մելքոնյան
Էլ. փոստ՝ elbakyan.edgar@gmail.com

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՑԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴԱՐՑԸ

Արցախյան հիմնահարցն ուրույն ազգային-քաղաքական հակամարտություն է, որն ունի էթնո-քաղաքական և պատմա-բարոյական հենք, ինչպես նաև ՀՀ համար ազգային անվտանգության նշանակություն: Արդի տեսքով այն ծագել է Կովբյուրոյի՝ 1921 թ. հուլիսիինգյան որոշմամբ, երբ կատարելապես անօրինական կերպով Արցախն անջատվեց նոր ձևավորված ՀԽՍՀ-ից և հանիրավի կերպով մտցվեց ԱխՍՀ կազմի մեջ¹:

Խորհրդային տարիներին հարցն այս եղանակով առերևույթ սառեցվեց: Եվ միայն 1988 թ. Ազգային զարթոնքն ու Արցախյան շարժումն էին, որ վերստին Արցախյան հարցը դարձրին միջազգային հարաբերությունների օբյեկտ՝ սկզբում լոկալ խՍՀՍ շրջանակներում, ապա նաև երկկողմ և միջազգային մակարդակով: ԽՍՀՍ մինչև իր գոյության ավարտն այդպես էլ չկարողացավ պատշաճ կերպով հանդես գալ որպես հիմնահարցին լուծում տվող սուբյեկտ, ընդհակառակը՝ դեռ նախքան իր փլուզումը կիրառեց խտրական, հայահալած քաղաքականություն², անկախացող Հայաստանի Հանրապետությանը և Ադրբեջանի Հանրապետությանը «կտակելով» ավելի բարդ հիմնահարց: ԽՍՀՍ փլուզումից հետո Արցախյան հարցի ռազմական լուծման անմիջական սուբյեկտներ էին ՀՀ և ԱՀ, իսկ որպես գործոն հանդես էին գալիս Թուրքիայի Հանրապետությունը, ՌԴ, ԱՀ-ին զենք-զինամթերք և վարձկաններ մատակարարող այլևայլ երկրները: Որպես հարցի խաղաղ կարգավորման սուբյեկտներ են ՀՀ, ԱՀ, միջազգային հանրություն կոչվածը, ասել է թե՛ ՄԱԿ-ը, բայց առավելապես ԵԱՀԿ Մինսկի խումբը: Մինսկի խմբի անդամ էր նաև Թուրքիայի Հանրապետությունը (սկսած ստեղծման օրից՝ 1992 թ. մարտ 14): Պատմականորեն վերջինիս մասնակցությունը արցախյան հարցին սկիզբ է առել ավելի վաղ և ունի ավելի լայն ընդգրկում, քան Մինսկի խմբի շրջանակներն են ենթադրում:

Օբյեկտիվ հանգամանքների բերումով՝ Արցախը պանթուրքիզմի ազդեցիվ նկրտումների ծիրում է հայտնվել դեռ Ի դարի սկզբին: Իր առջև նպատակ դնելով հասնելու բոլոր թյուրքական ազգերի ազատությանն ու էթնո-մշակութային և քաղաքական միասնությանը՝ պանթուրքիզմն Այսրկովկասում որպես հենակետ ընտրեց տեղի մահմեդականներին, առավելապես Լեռնային և Դաշտային Ղարաբաղների մասամբ թյուրքաբնակ շրջանները: Երիտթուրքական կազմակերպությունները, որոնք հանդիսանում էին պանթուրքիզմի գաղափարախոսության կրողն ու այն մարմնավորող հանրակարգը, դեռ 1900-ականներին կապեր էին պահպանում Կովկասի մահմեդական կազմակերպությունների հետ: Երիտթուրքական կենտրոնական կոմիտեի անդամ Բեհաեդդին Շաքիր բեյն իր մի գաղտնի մամակում, որը թվագրված է 1906 թ. մարտ, և վերնագրված է «Կովկասի մահմեդական եղբայրներին», գրում է.

¹ Միմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, 2 գրքով, գիրք Բ., Երեւան, 1996, էջ 671; Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում եւ XX դարի առաջին քառորդին, Երեւան, 2003, էջ 338; Ղազարյան Ա., Ռուսաստանի Կոմունիստական (բոլշեւիկների) կուսակցության Կենտկոմի կովկասյան բյուրո, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, 1 հատորով, Երեւան, 2004, էջ 575-576:

² Հենց ԽՍՀՄ ՁՈՒ եւ ԼԳՆ ներքին գործերի ստորաբաժանումներն էին ադրբեջանական ԼԳՆ ՄՀԵՋ-ականների հետ համատեղ իրականացնում ահաբեկչական-պատժիչ գործողություններ Գյուսիսային Արցախի դեմ, ինչը պատմության մեջ հայտնի է «Օղակ» պայմանական անվամբ:

«Հայերը մեր թշնամիներն են և ռուսական լծից ձեր ազատագրվելու գլխավոր խոչընդոտը: Նրանց թուլացնելու հստակ ծրագիր մշակեք»: Այդ «ծրագրի» քվինտեսենցիան դարձան հայ-թաթարական ընդհարումները, որում Օսմանյան կայսրությունը մեծապես աջակցում էր Կովկասի մահմեդականներին¹: Արցախում ու գլխավորապես Շուշիում ստեղծվեցին երիտթուրքական կազմակերպությունների մասնաճյուղեր ու պանթուրքիստական քարոզչության որջեր²: Արցախի ընտրությունը պատահական չէր, քանզի հանգուցային տեղադիրք ունենալով Հայկական լեռնաշխարհի այս հատվածում՝ Արցախը պաշտպանական և հարձակողական հսկայական նշանակություն ունի այն տիրապետողի համար:

Արցախի նկատմամբ պանթուրքիստական ձգտումները, շարունակական բնույթ կրելով, ձգվեցին մինչև Ռուսական կայսրության փլուզումը, «մութ ձեռքի աշխատանքը Կովկասում» (Ս. Վրացյան) և վերջապես մինչև այսրկովկասյան հանրապետությունների գոյացումն ու նրանց միջև սահմանավեճերի առաջացումը: Այդ նկրտումներն իրենց ընդհանրական ամփոփումը գտան տիրաահռչակ Վեհիբ Մահմեդ փաշայի խոսքերում. «... Մենք պետք է տարածուխնք դէպի արևելք... մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան և Ատրպեշան են: Մենք պետք է ճամբայ ունենանք դէպի հոն: Եւ դուք՝ Հայերդ կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Նախիջևանն ու Չանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը և երթալու Պաքու: ... Մեզի պետք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարաւորութիւն տան մեր բանակներուն առաջ շարժելու և պաշտպանուելու: Մէկ ճամբան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, ... միւսը՝ կ'երթայ Շարուր-Նախիջևան-Չանգեզուրով Քուրի հովիտը...»³:

Պատմագիտության, այդ թվում՝ ժամանակակից հայ քաղաքական պատմագիտության մեջ ընդունված տեսակետներից է, որ Արցախը ԱԽՍՀ կազմում թողնելու որոշումը Մոսկվայի պայմանագրի տրամաբանական շարունակությունն էր և քեմալական Թուրքիայի հանդեպ իրականացված բարեկամական ժեստ էր⁴: Ասվածն առավել ակնառու է դառնում, երբ հաշվի ենք առնում Մոսկվայի պայմանագրի երրորդ հոդվածը, որով ԹՀ ԱԽՍՀ խնամակալությանն էր հանձնում Նախիջևանը՝ այն երրորդ կողմին չզիջելու պայմանով⁵: Ըստ էության, քեմալա-թաթար-բոլշևիկեան դավադրությունը⁶ դեռ այն օրերին կարող էր իրականացնել Վեհիբ փաշայի «իդձը», եթե չլինե՞ր Չանգեզուրի հայության հերոսական պայքարը՝ Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ⁷, ինչի շնորհիվ Չանգեզուրը մնաց ՀԽՍՀ կազմում՝ զգալապես հարված հասցնելով ԹՀ և ԱԽՍՀ պանթուրքիստական նկրտումներին:

Պանթուրքիստական այդ ձգտումները բնավ չմեռան քեմալական-հանրապետական կարգերի հետ. Քեմալի այն խոսքերը, որ «... մենք (թուրքերը - է.է.) սոսկ կյանք և ազատություն ուզող ազգ ենք ... և պետք է իմանանք մեր տեղը» (1921 թ. դեկտեմբեր 1)⁸, եթե անգամ ունեին գործնականացման միտում, ապա միայն արևմտյան քաղաքականության մեջ, իսկ արևելյան քաղաքականության մեջ շարունակում էր կիրարկվել նույն մարտավարությունը: Այսպես՝ Կարսի պայմանագրի

¹ Демоян Г., Турция и Карабахский конфликт в конце XX – начала XXI веков, Ереван, 2006, с. 29-30:

² Նույն տեղում, էջ 30:

³ Նախիջևան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բ. Տպագրութիւն, 1968, էջ 86:

⁴ Weisbrode K., Central Eurasia – Prize or Quicksand?: Contending Views of Instability in Karabakh, Ferghana and Afghanistan, Oxford, 2001, p. 27:

⁵ Документы внешней политики СССР, т. 3, Государственное издательство политической литературы, Москва, 1959, с. 597-604:

⁶ Մանրամասն տե՛ս Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Երևան, 2007, էջ 303-309:

⁷ Մանրամասն տե՛ս Սիմոնյան Ա., Չանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000:

⁸ Atattürk'ün Söylev ve Demeçleri, I cilt, էջը 195-196: Տե՛ս նաեւ Guy E. Métraux, International Commission for a History of the Scientific and Cultural Development of Mankind, The New Asia, New American Library, 1965, p. 73:

կնքումից անմիջապես հետո Թուրքիան սկսում է զորքեր կենտրոնացնել խորհրդաթուրքական բաժանարար գծի երկայնքով, կազմակերպել տեղական քրդերի հաճախակի ավազակային հարձակումներ ՀԽՍՀ վրա, կենտրոնական թերթերով լայնորեն քարոզել «Մեծ Թուրանի» ստեղծման անհրաժեշտությունը¹:

Ուշագրավ է, որ այդ օրերին գործող «պարագլուխների» խմբի մեջ, որի նպատակն էր Անդրկովկասը միացնել Թուրքիային, կարևոր դերակատարում ունեին ադրբեջանցիները, այդ թվում՝ արցախահայության անհաշտ թշնամի Խոսրովբեկ Սուլթանովը, նախկին Ադրբեջանի Հանրապետության ներքին գործոց նախարարի օգնական Ռուստամբեկովը, ծնունդով դարաբաղցի հայտնի ահաբեկիչ Բաբան: Կազմակերպության անդամները կապ էին պահպանում Ադրբեջանում և Ղաղստանում գործող պանթուրքիստների հետ և հորջորջվում էին թուրքական «կորպուսների» ուղեկցորդներ²:

Ինչպես ցույց կտա հետագա ուսումնասիրությունը, պանթուրքիզմի գաղափարախոսությունը և դրա գործնականացումը, հատկապես Անդրկովկասի, այդ թվում՝ Արցախի պարագայում, շարունակում են իրենց գոյությունը նաև մեր օրերում՝ արդեն նորագույն աշխարհաքաղաքական պայմաններում: ՀՀ դեմ պանթուրքիզմի քաղաքականությունը առավել ցցուն կերպով երևան է գալիս արցախյան հարցում:

Մինչև ԽՍՀՄ փլուզումը Թուրքիայի Հանրապետության դիրքորոշումը Արցախյան հարցի նկատմամբ խիստ զգուշավոր էր, և հարցն առժամանակ դիտվում էր որպես ԽՍՀՄ ներքին խնդիր: Սակայն վերջինիս ապակենտրոնացման և աստիճանական թուլացման հետևանքով, ինչպես վերը նշեցինք, այն դադարեց հիմնահարցի օբյեկտիվ լուծման սուբյեկտ լինել՝ ադրբեջանական շրջանակները աստիճանաբար սկսում են քննարկել ԹՀ օգնությանը դիմելու և նույնիսկ՝ էթնո-լեզվական ընդհանրության վրա միասնական պետություն ստեղծելու գաղափարները³: Աստիճանաբար նախաձեռնություն է ցուցաբերում նաև Թուրքիայի Հանրապետությունը, որն իր առջև նպատակ էր դրել տարածվելու Ադրիատիկից մինչև Չինաստան և այդ ճանապարհին որպես ցատկահարթակ պիտի օգտագործվեր Ադրբեջանի նորակազմ Հանրապետությունը, որի կազմավորումը Թուրքիայում մեծ խանդավառությամբ ընդունեցին:

Պանթուրքիստական միտումներին խրախույս հանդիսացավ աշխարհաքաղաքական ընդհանուր վիճակը: ԽՍՀՄ փլուզման և Սառը պատերազմի ավարտի հետևանքով նախկին միութենական հանրապետություններում և առանձին տարածաշրջաններում ստեղծվելու էր ուժային որոշակի վակուում, որը լցնելու խնդիր էին հետապնդելու արևմտյան ուժերը, հատկապես ԱՄՆ: Մերձավորարևելյան տարածաշրջանում նոր «ենթաբևեռի» դերը վերապահվելու էր Թուրքիային: 1991 թ. մարտի 23-24 Թուրքիայի նախագահ Թուրքուբ Օզալը այցելեց ԱՄՆ, որտեղ ստորագրվեց «Թուրք-ամերիկյան ռազմավարության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը», ըստ որի Անդրկովկասն ու Միջին Ասիան ազդարարվեցին թուրքական ազդեցության գոտի: Այս համատեքստում էլ Թուրքիան դիտարկվեց որպես Անդրկովկասում խաղաղության պահպանման միակ երաշխավորը, և արցախ-

¹ Ձոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը եւ հայ-թուրքական հարաբերությունները, Երևան, 1979, էջ 313-315:

² Նույն տեղում, էջ 316-317:

³ Դեմոյան Հ., Թուրքիան եւ Ղարաբաղյան ազատագրական պատերազմը, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: 1 հատորով, Երևան, 2004, էջ 211-212:

Նկատենք, որ սա էլ բնավ նոր գաղափար չէր և իր ակունքներն առնում էր դարասկզբի թրքական հավատամքից՝ «dil birliđi, il birliđi» («լեզվի միություն, հողի միություն») (Շահան Նաթալի, Թուրքիզմը Անգղային Պաքու եւ թրքական օրիէնթասիոն; Թուրքերը եւ մենք, Երևան, 1992, էջ 35):

Հետագայում արդեն Հեյդար Ալիևի կողմից առաջ քաշվեց «bir millət, iki dövlət» («մեկ ազգ, երկու պետություն») գաղափարը, որը թեպետ օրակարգից հանում էր մեկ պետություն ստեղծելու գաղափարը, սակայն ենթադրում էր սերտ համագործակցություն երկու պետությունների միջև: «Bir millət-iki dövlət: münasibətlərin inkişafında Heydər Əliyev fenomeni-gənç liderlərin gözü ilə» - <http://www.yeniazerbaycan.com/news/9530.html>

յան հակամարտության կարգավորումը պայմանավորված նրա միջնորդությամբ^{1,2}։

Այդպիսի միջնորդության հայտ թուրքիան արել էր դեռ հունվար ամսին, երբ վարչապետ Սուլեյման Ղեմիրելի և Հիքմեթ Չեթինի մակարդակով հայտարարություններ էին արվում, որ «Հայաստանի և Ադրբեջանի կողմից վստահության առկայության դեպքում թուրքիան մեծապես կնպաստի հակամարտության կարգավորմանը»³։

Այդ դեպքերից առաջ արդեն ԱԽՍՀ-ում ձևավորված հասարակական-քաղաքական մտայնությունները կասկած անգամ չէին հարուցում, որ Ադրբեջանը կողջունի այդ միջնորդությունը⁴։ Նույնը, սակայն չէր կարելի ասել, Հայաստանի Հանրապետության մասին, որը, ձեռք բերելով ինքնիշխանություն, իր առջև խնդիր պիտի դներ որպես ազգային պետություն՝ ինքնուրույնաբար լուծելու երկրի առջև ծառայած բոլոր ազգային հիմնախնդիրները, այդ թվում՝ արցախյան հարցը։ Այս իսկ պատճառով, թուրքական իշխող շրջանակները «սրտի ցավով» ընդունեցին ՀՀ անկախության գաղափարը, քանզի այդ պարագայում նրանք, ինչպես հենց իրենք էին խոստովանում, հայտնվելու էին Հունաստան-Հայաստան արցանի մեջ⁵։ Սրանով հանդերձ իսկ՝ «հայկական վախը» բնավ չէր կարող ստիպել թուրքիային հրաժարվելու իր պանթուրքիստական նպատակներից։ 1991 թ. դեկտեմբերի 16-ին թուրքական կառավարությունը ճանաչեց նախկին միութենական հանրապետությունների, այդ թվում՝ ՀՀ անկախությունը⁶։ Անկախության ճանաչումը, սակայն, չէր ենթադրում և ցայսօր չի ենթադրում դիվանագիտական կապերի հաստատում։ Դրա համար թուրքական կողմն առաջադրեց նախապայմաններ, որոնց թվում էր Լեռնային Ղարաբաղի վրա ճնշում գործադրելու պահանջը, որպեսզի վերջինս ընդունի Ադրբեջանի գերակայությունն ու «տարածքային ամբողջականությունը»⁷։

Այսպիսով՝ 1992 թ. սկզբին արդեն երկու թյուրքական պետությունների միջև կար համաձայնություն՝ կապված թուրքիայի՝ արցախյան հարցում միջնորդի դերում հանդես գալու հետ։ Որպես ՀՀ վրա ճնշում բանեցնելու միջոց աստիճանաբար սկսում էին ուրվագծվել թուրքիայի՝ արտաքին աշխարհի հետ ՀՀ-ին միակ կապող օղակ լինելու տնտեսական գործոնները⁸։

Պայմանականորեն այս շրջանը՝ ԽՍՀՄ հոգեվարքից մինչև 1992 թ. փետրվար, կարող ենք համարել թուրքիայի Հանրապետության՝ արցախյան քաղաքականության այն փուլը, երբ վերջինս տարածաշրջանում իր ազդեցությունը մեծացնելու և թյուրքական աշխարհում հեղինակությունը չկորցնելու նպատակով փորձում էր հանդես գալ որպես միջնորդ, իսկ Անդրկովկասում առհասարակ ներկայանալ որ-

¹ Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, էջ 6։

² Ինչ խոսք, սույն իսկ համատեքստում վճռորոշ նշանակություն ունեցավ Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում չեզոքացնելուն ուղղված արևմտյան երկրների, տվյալ շրջանում՝ ԱՄՆ-ի ավանդական քաղաքականությունը։

³ Նույն տեղում, էջ 19։

⁴ Այդ տրամադրությունների հանրագումարային խտացումը նախագահ Այազ Մուֆալիբովի հայտարարությունն էր, որ «հարցը միջազգային բնույթ է կրում, և թուրքիան պետք է աջակցի մեզ» («Ազգ», 12 փետրվար, 1992)։

⁵ Նույն տեղում, 20 մարտ, 1991։

⁶ Չաքրյան Հ., Նշ. աշխ., էջ 14։

⁷ Հովհաննիսյան Ն., Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 1996, թիվ 16, էջ 14։ Տե՛ս նաև Սաֆրաստյան Ռ., Հայաստան-Թուրքիա հարաբերությունների շուրջ, «Հանրապետական», թիվ 9 (79), 2009, էջ 8։

⁸ Թուրքիայի հիշյալ պահանջը բացի նախապայման լինելուց, նաև անուղղակի խոստովանություն էր, որ ՀՀ ունի լծակներ, հետևաբար իշխանությունը Արցախի նկատմամբ, ինչը Ադրբեջանը չունի և չի ունենա երբեք...

⁹ Խոսքը մասնավորապես ալաթոնյան ծրագրի և դրա շրջանակներում Տրապիզոնի նավահանգիստը Հայաստանի տրանսպորտային տակ դնելու թուրքական կողմի պատրաստակամության մասին է, ինչի մասին առավել մանրամասն տե՛ս Չաքրյանի նշված աշխատությունը։

պես «մեծ պետություն», որն, ի տարբերություն, նորակազմ ՀՀ և ԱՀ-ի ունի պետականության դարավոր պատմություն, հետևաբար՝ կայացած պետություն, ուստի միայն ինքը կարող է լուծում տալ տարածաշրջանում առկա հիմնախնդիրներին ու հակամարտություններին։

Թուրքական կողմի այս մտայնություններն իրականում սին էին, և շուտով դա ակնհայտ դարձավ՝ շնորհիվ Արցախում հայոց մարտիկների տարած փայլուն ազատագրական մարտերի։ 1992 թ. փետրվարին հայկական ուժերը ազատագրեցին Խոջալու¹։ Լռեցնելով ադրբեջանական կրակակետերը և ապաշրջափակելով Արցախի օդանավակայանը²։ Ակնհայտ է, որ սա ռազմավարական նշանակության հաղթանակ հաղթանակ էր հայության համար և նույնպիսի պարտություն՝ թյուրքական կողմի համար։ Այդ օրերին ԹՀ արտգործնախարար Հիքմեթ Չեթինը պաշտոնական այցով գտնվում էր Տաշքենդում, սակայն Անկարայից հրաման ստացավ դադարեցնելու այցը և փութով մեկնել Բաքու։ Վերլուծելով այս, ինչպես նաև այդ օրերին թուրքական շրջանակներում խնդրվող այլապիսի իրադարձությունները՝ կարող ենք մի համարձակ ենթադրություն առաջ քաշել, ըստ որի՝ այսպես կոչված Խոջալուի ցեղասպանությունը դավադրության մի ամբողջական համալիր էր ադրբեջանցի բնակչության հանդեպ՝ մշակված ադրբեջանական որոշ ուժերի և ԹՀ կողմից։ Ադրբեջանում «Խոջալուի ցեղասպանությունը» լուծելու էր ներքաղաքական-կլանային խնդիր, այն է՝ նախագահ Այազ Մուֆալիբովի վարկաբեկումը և պաշտոնանկությունը³, իսկ թուրքիայի համար casus belli էր հանդիսանալու ընդդեմ Հայաստանի Հանրապետության։

Թուրքիան արդեն հունվարին ստացել էր Ադրբեջանի իշխանությունների համաձայնությունը՝ միջամտելու հարցին։ Որպես միջամտության ձևեր կարող էին օգտագործվել ռազմականը և դիվանագիտականը։ Թուրքական կողմը արագ հասկացավ, որ անգամ ՀՀ իշխանությունների արևմտյան կողմնորոշման պայմաններում՝ բովանդակ Հայաստանում ոչ մեկը միթու չունեի գեները վայր դնելու, քանզի լուծվում էր ամբողջ ՀՀ անվտանգության հարցը։ Ուստի և կարիքն առաջացավ ռազմական միջամտության և միաժամանակ ՀՀ նկատմամբ համընդհանուր միջազգային ճնշման։ Այս դիտանկյունից առավել նպաստավոր հանգամանք, քան հայերի կողմից իրականացված «ցեղասպանության» լեզբնող⁴, չէր կարող լինել։ Սկսվում էր արցախյան հիմնախնդիրն թուրքիայի մասնակցության երկրորդ՝ ռազմադիվանագիտական միջամտության պայմանական փուլը։

¹ Երկախի Իվանյանը։

² Մելիք-Շահնազարյան Լ., Խոջալուի ազատագրում 1992, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, 1 հատորով, Երևան, Հայկական հանրագիտարանի հրատարակչություն, 2004, էջք 270-271։

³ Որպեսզի ասվածը մերկապարանոց չինչի, բերենք որոշ վկայություններ։ Ադրբեջանցի լրագրող Եյնուլա Ֆատուլաևային տված հարցազրույցում նախկին խոջալուբնակ մի ադրբեջանցի ասել է. «...Նրանք (նախքան Խոջալուի ազատագրումը այնտեղ բնակվող մեխիթեթի թուրքերը - է. է.) օգտվել են Կարկառի հունի երկայնքով հայերի կողմից տրամադրված տարանցիկ ճանապարհից և, իրականում, միջանցքի հարևանությամբ կանգնած հայկական զինվորներն իրենց վրա կրակ չեն բացել։ Սակայն, Ադրբեջանի ժողճակատայինների գումարտակի մի քանի զինվորներ, չզիտես ինչու, նրանց (նախքան Խոջալուի ազատագրումը այնտեղ բնակվող մեխիթեթի թուրքերի - է. է.) մի մասին տարել են դեպի Նախիջևանիկ գյուղ, որն այդ ընթացքում գտնվում էր Ասկերանի գումարտակների վերահսկողության տակ, իսկ դրան հարակից տարածքն անընդհատ հրետակոծվում էր Ադրբեջանի կողմից» (Հարսրայան Ս., Ինչպես և ինչու տեղի ունեցան Խոջալուի դեպքերը, <http://asekose.am/2012/02/23/%D5%AB%D5%B6%D5%B9%D5%BA%D5%A5%D5%BD-%D5%A5%D5%BE-%D5%AB%D5%B6%D5%B9%D5%B8%D6%82-%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AB-%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%81%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B8%D5%BB%D5%A1%D5%AC%D5%B8%D6%82%D5%AB/>)։

Ապահով միջանցքի գոյությունը հաստատել է նաև Այազ Մուֆալիբովը ռուսական «Նեզավիսիմայա գազետային» տված ապրիլերկուսյան հայտնի հարցազրույցում (1992)։

⁴ Բուն թուրքիայի համար սա ուներ նաև ինքնության ճգնաժամը հաղթահարելու և փաստարկային նշանակություն։ Դրա վկայությունն են այդ օրերին Միլի Մեջլիսի նախագահ Հյուսանթեթին Ջինդրուքի խոսքերը. «Հայերի բռնությունները Լեռնային Ղարաբաղում մի անգամ ևս հավաստում են, որ թուրքերին վերագրվող եղեռնն անցյալում հենց իրենք են իրագործել» («Ազգ», 7 մարտ, 1992)։

Սկզբնավորվեց հակահայկական հիստերիայի ալիք: «Ադրբեջանի հետ բարեկամության, մշակույթի և արվեստի միությունը» մարտի 1-ին դատապարտեց հայերի «բռնությունները», իսկ միության նախագահ Նամըք Բաբեբարն ու նրա համախոհները պատրաստակամություն հայտնեցին որպես կամավորական կռվելու հայերի դեմ: Հաջորդ օրը Անկարայի համալսարանը հայերիս գործողությունները որակեց որպես ցեղասպանական, ևս մեկ օր անց Կոնիայի «Սելջուկյան» համալսարանի ռեկտորատը որոշում կայացրեց «ցեղասպան հայերի ոճրագործությունների» առթիվ դիմել ՄԱԿ-ին և միջազգային հեղինակավոր այլ կազմակերպություններին: Օգալը կոչ արեց կառավարությանը գործողություններ ձեռք առնելու հայերի «ոճրագործությունների» դեմ¹: Վերջապես, վերոբերյալ casus belli-ն ապահովելու շրջանակներում փորձ արվեց հարցը տեղափոխելու նաև միջազգային իրավական դաշտ. «Ղարաբաղի կարգավիճակի հարցում թուրքական միջազգային համաձայնագրերից բխող իրավունքներ ունի, առանց թուրքական համաձայնության չի կարող փոփոխությունների ենթարկվել այդ կարգավիճակը» («Մայր հայրենիք» կուսակցության նախագահ Մետուք Յըլմազ)²:

Այս ուղղությամբ թուրքական կողմից արվեցին նաև գործնական քայլեր: Նրա գործուն ջանքերով Եհսուվ պաշտոնապես ճանաչեց «խոջալուի ցեղասպանությունը»³:

Խոջալուի ազատագրմանը հետևեցին Շուշվա և Բերձորի ազատագրումները: Դրանից հետո ԹՀ վարչապետ Դեմիրելը պարզորոշ հայտարարեց, որ թուրքական այլևս չի կարող կողմնակի դիտորդ լինել, և ըստ այդմ՝ պետք է «մի փոքր վախեցնել» հայերին⁴: Հակահայկական պայքարում առանձնակի ակտիվություն էր հանդես բերում Ձախ ժողովրդական կուսակցության նախագահ Բյուլենթ Էջլիթը: Նա պահանջեց դադարեցնել թուրքական տարածքով ՀՀ-ին տրամադրվող մարդասիրական օգնությունը, ռազմական աջակցություն ցույց տալ Ադրբեջանին, իսկ Նախիջևանի վրա հայերի հավանական հարձակումը դիտարկել որպես հարձակում ԹՀ դեմ⁵:

Գրեթե համանման, հակահայկական դիրքորոշում ունեցող նաև «Գորշ գայլերի» առաջնորդ Ալիարսլան Թյուրքեշը: Վերջինս առաջիններից մեկն էր, որ առաջ քաշեց ՀՀ շրջափակելու, ինչպես նաև արցախյան հարցով համաթյուրքական մոտեցում որդեգրելու գաղափարները⁶: Ազգայնամուտների մասնակցությամբ սկսվում է կամավորական ջոկատների հավաքագրումը. վերջիններս Նախիջևանի տարածքով անարգել ներթափանցում էին Ադրբեջան՝ համալրելու ադրբեջանական ջոկատները: Ըստ թուրքական «Gerçek» («Իրականություն») թերթի՝ 1992 թ. հունիսին այդ կամավորների թիվը 3000 էր:

Այսպիսով՝ աստիճանաբար սպառելով դիվանագիտական զինանոցի հնարքները՝ ԹՀ դիմեց ուղղակի կոնֆրոնտացիոն քաղաքականության, այն է՝ ՀՀ շրջափակման և Արցախյան պատերազմում ռազմական ուղղակի ներգրավվածության: 1993 թ. ապրիլին հայկական զինված ուժերը ազատագրեցին Զարվաճառը՝ պատմական Վայկունիքը: Դրան ի հակազդեցություն և ի պատասխան՝ թուրքական փակեց հայթուրքական բաժանարար գծի վրա գտնվող անցակետերը, արգելեց իր տարածքով բոլոր տեսակի բեռնափոխադրումները Հայաստան, հայկական ինքնաթիռների առջև փակեց H-50 օդային միջանցքը⁷: Թուրքոս Օգալը հանդես եկավ հայերի առաջխաղացքը թուրքական ռազմական ուժերով կանգնեցնելու, ինչպես նաև «Հայաստանին ատաններ ցույց տալու» հայտարարություններով: Որպես դասական

պանթուրքիստ՝ Օգալը հայտարարեց, թե «հայերը դաս չեն քաղել Անատոլիայում կրած պատժից»¹:

Զարվաճառի ազատագրումից հետո թուրքական մեծացրեց իր ռազմական օգնությունը Ադրբեջանին: 1993 թ. ձմեռային հարձակման նախօրեին Ադրբեջանում գործել են շուրջ 250 թուրք բարձրաստիճան զինվորականներ և հազարավոր կամավորականներ, որոնք մշակել և իրականացրել են հայկական զինված ուժերի դեմ մղվող հիմնական ռազմական գործողությունները²:

Թուրքիայի ռազմա-դիվանագիտական ջանքերը, թյուրքական գործուն առիասարակ, ինչպես նաև այլևայլ միջազգային դերակատարների հակահայ քայլերը չկարողացան էական բեկում մտցնել արցախյան ազատագրական պատերազմի այս փուլում: 1994 թ. մայիսի 12-ի զինադադարով պատերազմի այդ փուլն ավարտվեց. պատերազմը ձեռք բերեց դիվանագիտական պայքարի բնույթ, որտեղ թուրքական շտապեց իր դերակատարումը ստանձնել³: ԹՀ ջանքերը մեծապես կենտրոնացրեց միջազգային տարբեր ատյաններում՝ ՄԱԿ, ԵԱՀԿ, Իսլամական վեհաժողով կազմակերպություն, թյուրքական զանազան զագաթաժողովներ, Արցախյան հակամարտության առնչությամբ ադրբեջանամետ դիրքորոշում ապահովելու, ՀՀ-ին դատապարտող բանաձևեր ընդունելու և դրանք իրագործելու ուղղությամբ⁴:

Արցախյան հարցում թուրքիայի ակտիվության հերթական փուլը, ինչպես և 90-ականներին, պայմանավորված էր հայ-թուրքական հարաբերություններում հնարավոր մերձեցմամբ: Որպես հայ-թուրքական հարաբերությունների բարելավման և արձանագրությունների վավերացման նախապայման՝ թուրքիան առաջ էր քաշում ՀՀ-ի կողմից «գրավյալ» տարածքների պարպումը՝ հայտարարելով, որ հայ-թուրքական հարաբերություններում բարելավում չի կարող լինել, քանի դեռ «բարելավում» չկա Արցախյան հարցում⁵: Նկատենք, որ առաջին հայացքից ԹՀ պետական շահերին հակասող այս ադրբեջանամետ դիրքորոշումն իր խորքում ունի պանթուրքիստական հենք: Ադրբեջանը ի տարբերություն Միջին Ասիայի թյուրքալեզու ժողովուրդների ազգային պետությունների՝ շարունակում է արձագանքել Անկարայից եկող պանթուրքիստական ազդակներին՝ դրանով փորձելով հակազդել և հակակշռել Ռուսաստանի, Իրանի ազդեցություններին, բայց առաջին հերթին ՀՀ և հայությանը առիասարակ: Հասկանալի է, որ թուրքիան չի կարող կորցնել Ադրբեջանի պես դաշնակցին:

Այսպիսով՝ կարճաժող ուսումնասիրությունն իսկ ապացուցելու է գալիս, որ Արցախյան հարցում թուրքիայի Հանրապետությունն ունի ուրույն դիրքորոշում, որը

¹ Դեմոյան Հ., Թուրքիան և Ղարաբաղյան ազատագրական պատերազմը, էջ 212:

² Թուրքիան առիասարակ մեծ դեր է խաղացել ադրբեջանական բանակի կազմավորման գործում: Պատերազմի ամբողջ ընթացքում թուրքիան բազմիցս զաղտմաբար, տարբեր ուղիներով մեծ քանակությամբ զենք և զինամթերք է փոխադրել ԱՀ, նպաստել ադրբեջանցի սպաների և զինվորների մարտական կարողությունների ու ռազմական գիտելիքների կատարելագործմանը՝ նրանց ուսուցումը կազմակերպելով թուրքիայի ռազմական ուսումնարաններում (Դեմոյան Հ., Թուրքիան և Ղարաբաղյան ազատագրական պատերազմը, էջ 213):

³ Մոռացության չմատնվեց նաև ռազմական աջակցության պլանը. առավել քան խոսում է ԹՀ պաշտպանության նախարար Իսմեթ Յըլմազի հայտարարությունը, որ թուրքիան կշարունակի ամեն տեսակի ռազմական աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին:

⁴ Նույն տեղում:

⁵ Ասվածի ամբողջական խտացումն են Մելուք Չավուշյանի այն խոսքերը, թե թուրքիան չի փոխել փոխել իր քաղաքականության կուրսը, ինչպես՝ *արևմուտքից արևելք* (ընդգծումն իմն է - Է.Է.), և պատրաստ է ՀՀ հետ հարաբերությունները կարգավորել, եթե վերջինս «ազատի «Ադրբեջանի» տարածքները» (տե՛ս՝ <http://www.panarmenian.net/arm/news/53006/>): Արևմուտքից արևելք թուրքիայի տարածվելու մասին խոսելիս չենք կարող չհիշել Վեհիբ փաշայի խոսքերը. «... Ճակատագիրը կը քաշէ թուրքիան արևմուտքից արևելք. մենք հեռացանք Պալքաններին, կը հեռանանք նաև Ափրիկեն, բայց մենք պետք է տարածուինք դեպի Արևելք. հոն է մեր արինը, մեր կրօնը ու լեզուն: Եւ ասիկա տարերային ձգողութիւն ունի... Մենք պետք է ճամբայ ունենանք դեպի հոն...» (Խատիսեան Ալ., Եւ. աշխ., էջ 86): Ավելի քան պարզ է, որ թուրքական արտաքին քաղաքականության միտումները բնավ չեն փոխվել և չունեն փոխվելու միտում:

¹ Չաքրյան Հ., մշ. աշխ., էջ 21:

² Նույն տեղում, էջ 21-22:

³ Recognition of the genocide perpetrated against the Azeri population by the Armenians: available at <http://assembly.coe.int/documents/workingdocs/doc01/edoc9066.htm>:

⁴ Դեմոյան Հ., Թուրքիան և Ղարաբաղյան ազատագրական պատերազմը, էջ 212:

⁵ Նույն տեղում: Տե՛ս նաև Չաքրյան Հ., մշ. աշխ., էջ 22:

⁶ Նույն տեղում, էջ 22-23:

⁷ Նույն տեղում:

պայմանավորված է Թուրքիայի գերակա ռազմավարական շահերով և շարունակում է կրել պանթուրքիզմի գաղափարախոսությունը: Այսքանով իսկ իր ողջ էությանը այն հակահայկական է: Ուստի, թե՛ Արցախյան հարցում, թե՛ Թուրքիայի հանդեպ վարվելիք արտաքին քաղաքականության հարցում ՀՀ ազգային ռազմավարությունը մշակելիս պետք է հաշվի առնվի այս իրողությունը¹:

Эдгар Элбакян

ТУРЕЦКАЯ РЕСПУБЛИКА И НАГОРНО-КАРАБАХСКИЙ ВОПРОС

В данной работе автор затрагивает проблему прямого и косвенного участия Турецкой Республики в Нагорно-Карабахском вопросе. Скрупулёзным историческим анализом доказывается, что на протяжении всего XX века и до наших дней Арцах (Нагорный Карабах) имел особое место в планах пантюркских заговорщиков, а армянонаселённый Арцах в составе единого армянского государства являлся и является камнем преткновения для распространения Турции на Восток, что по сути являлось целью и идеалом пантюркизма. Обосновывается, что исходя именно из этих тенденций и стремлений, Турция оказывала и по сей день оказывает всестороннюю дипломатическую и военную помощь Азербайджанской Республике. Отсюда выводится политика Республики Армения в Арцахском вопросе и по отношению к Республике Турция, нацеленная на устранении Турции от процесса урегулирования Нагорно-Карабахского вопроса.

Edgar Elbakian

THE REPUBLIC OF TURKEY AND THE NAGORNO-KARABAKH ISSUE

In current work the author discusses the issue of direct and indirect intervention by The Republic of Turkey in the Nagorno-Karabakh conflict. By thorough analysis it is stated that throughout the 20th century and up till now Artsakh (Nagorno-Karabakh) has had a certain role for pan-turkist conspirators: Artsakh, inhabited by its indigenous population – Armenians, and included in the Armenian statehood, is stumbling block for Turkey to spread in the East, which is the main idea and the objective of the Pan-Turkism. The thesis is substantiated that these tendencies and objectives were the reason for which Turkey supported and supports Azerbaijan by diplomatic and military ways. Thus, the policy of the RA in Artsakh issue and towards the Republic of Turkey is clear: it is to be aimed at eliminating the presence of Turkey in Nagorno-Karabakh conflict.

¹ Այս առումով ողջունելի են հայկական կողմի՝ պարբերաբար արվող հայտարարությունները, որ Թուրքիան պետք է հեռու մնա արցախյան հարցից (տե՛ս մասնավորապես “Stay out of Karabakh, Nalbandian tells Turkey” - <http://www.hurriyetaidailynews.com/stay-out-of-karabakh-nalbandian-tells-turkey.aspx?pageID=238&nID=12660&NewsCatID=355>):